

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՍԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻ

№ 4.

Օ Ս Կ Ա Ր Ո Ւ Ա Յ Լ Դ

ՊՐԻՆՑՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ



ԱԼՖՅՕՆՍ ԴՕԴԷ

ԴՕՓԻՆԻ ՄԱՅԸ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԲՏՐՈՃԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՑ, 7

1909

82 | 7171

№-48 | Newyir Outupr.

Thpnyg 10 Sp5555m-

42.		204.
<u>51/xi</u>	<u>19/xii</u>	<u>188</u>
<u>30/xi</u>	<u>30/xii</u>	<u>140</u>

82-93
№-48

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

ՍՅՈՒԿԱՅԵ Է 1981 թ.

ՊՐԻՆՑՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ




ԱԼԵՔՍԱՆԴ ԴՕԴԷ


ԴՕՖԻՆԻ ՄԱՅԸ



ԷԼԵԲՏՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՆՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ, ՊՈԼԻՑ 7
1909



Պրինցն ու ծիծեռնակը



Շատ դարեր առաջ
Անգլիայի
կայսրը մի
գեղեցիկ
որդի ու-
նէր, որին
ամենքը

«Երջանիկ պրինց»*) էին կանչում: Եւ իս-
կապէս պրինցը շատ երջանիկ էր, որովհե-
տե ամենքը նրան սիրում էին և նա ապ-
րում էր անհոգ ու առանց վշտի:

*) Եւրոպայում Թագաւորի որդուն պրինց են ա-
սում:

Բայց երջանկութիւնը երկար չը տևեց. կայսեր սիրասուն ուրդին, «Երջանիկ պրինցը» մեռաւ: Նրա մահը վշտացրեց սմենքին:

Քաղաքային վարչութիւնը և ժողովրդի ներկայացուցիչները որոշեցին մի արձան կանգնեցնել «Երջանիկ պրինցի» յիշատակին ու զարդարել նրան թանկագին քարերով ու ոսկով: Մի տարի չանցած՝ քաղաքի հրապարակի վրա կանգնած էր «Երջանիկ պրինցի» արձանը, որի թիկնոցը զարդարւած էր ոսկէ տերևներով, սրի կոթը՝ թանկագին կարմիր սուտակով, իսկ աչքերը՝ գեղեցիկ մուգ կապոյտ թանկագին քարեր էին, որ փայլում էին աստղերի նման:

— Պրինցը գեղեցիկ է, հրեշտակի պէս, — ասում էին մանուկները, հիացած նայելով պրինցի արձանին:

Շատ տարիներ անցան: Մէկ անգամ, աշնանը, այդ քաղաքով թռչում անցնում էր մի ծիծեռնակ: Նրա ընկերները վաղուց արդէն գնացել էին Նգիպտոս, իսկ ինքը՝ չուզինալով բաժանւել իր սիրելի եղեգնիկից, չէր գնացել նրանց հետ: Նղեգնիկի հետ ծանօթացել էր նա գարնանը: Մի օր, սիրուն թիթեռնիկի ետևից թռչելիս, տե-

սաւ նրբակազմ եղեգնիկին, և այնպէս
զրաււեց նրա գեղեցկութիւնով, որ այնու-
հետեւ համարեա չէր հեռանում եղեգնիկից:
Թռչկոտելով նրա շուրջը, թևերով խփում
էր ջրին և արծաթափայլ կաթիլներով սը-
րբակում ու զւարճացնում էր նրան: Եղեգ-
նիկին շատ էր դուր գալիս այս բանը և
նա սիրալիր ողջոյններ էր տալիս ծիծեռ-
նակին:

Երբ ընկերները գաղթեցին, ծիծեռնա-
կը մենակ մնաց և հետզհետէ սառեց եղեգ-
նիկից:

«Ի դուր այսպէս սիրեցի սրան», մտա-
ծում էր նա. «Սա խօսել անգամ չը գիտի.
բացի զրանից, սիրալիր ողջոյններ է տալիս
ոչ միայն ինձ, այլև ամենիս, մինչև ան-
գամ պատահական քամուն»: Ծիծեռնակը
մտքի մէջ ընկաւ և վճռեց թռչել հարաւ:

— Լսիր, — հարցրեց նա մի օր եղեգնի-
կից. — համաձայն ես ինձ հետ ճանապարհ
ընկնել:

Եղեգնիկը շարժեց գլուխը «ոչ»:

— Եթէ դու այդպէս կապւած ես քո տան
հետ և պատրաստ ես մեր բարեկամութիւ-
նը զոհել նրան, ուրեմն մնաս բարև, մեր
մէջ ամեն ինչ վերջացած է...:

Ասաւ ծիծեռնակը և թրուաւ դէպի հա-
րաւ, Եգիպտոս:



Եւ ամբողջ օրը թըռ-
 չում էր և երեկոյեան
 մտածեց ընել, հանգստա-
 նալ: Քաղաքի հրապարա-
 կի վրա տեսնելով «Երջանիկ պրինցի» ար-
 ձանը, իջաւ, նրա ոտքերի առաջ կանգնեց:
 — Այ հրաշալի տեղ, — բացականչեց նա.
 — որքան ազատ և արձակ է շուրջս. ի հարկէ,
 ես այստեղ կը մնամ, կը հանգստանամ:

Չորս կողմը նայելով՝ նա նկատեց
 պրինցի ոտքերի վրայի ոսկէ կապերը և
 մտածեց. «Հիանալի է, ես ոսկէ ննջարան
 կուեննամ»:

Ծիծեռնակը գլուխը կոխեց թևերի տակ,
 պատրաստուում էր ընելու, մէկ էլ յան-
 կարճ նրա գլխին մի կաթիլ ընկաւ:

— Զարմանալի՛ բան, — մտածեց ծիծեռ-
 նակը շուրջը դիտելով. — երկինքը պարզ է,
 աստղերը փայլում են, բայց անձրև է գա-
 լիս:

Ծիծեռնակի վրա ընկաւ երկրորդ կա-
 թիլը:

— Ինչպէս երևում է, արձանը անձրևից
 չի պաշտպանում. հարկաւոր է կտուրների

տակ տեղ գտնել, — ասաւ ծիծեռնակը, թե-
ւերը բաց արեց և ուզում էր թռչել, բայց
այդ ըռպէին նրա գլխին ընկաւ երրորդ
կաթիլը: Նա բարձրացրեց գլուխը և տեսաւ
«Երջանիկ պրինցին»: Նրա աչքերից էին հո-
սում արցունքի կաթիլները, որ այտերի
վրայից գլորւում էին գետին: Լուսնի ճա-
ռագայթները լուսաւորում էին նրա երեսը:
Նա անջքան տխուր էր և անջքան գեղե-
ցիկ, որ ծիծեռնակի սիրտը թնդաց կարեկ-
ցութիւնից:

— Ո՞վ ես դու, — հարցրեց նա:

— Ես «Երջանիկ պրինցն» եմ:

— «Երջանիկ», բայց այնպէս դառն ար-
տասւում ես, որ ինձ թրջեցիր քո արցունք-
ներով... Պատմիր, խնդրեմ, ի՞նչն է լացիդ
պատճառը:

— Երբ ես դեռ մարդկային սիրտ ու-
նէի և ապրում էի արքայական պալատում,
արցունքի մասին զաղափար չունէի, — ըս-
կսեց պատմել պրինցը. — հոգսն ու վիշտը
ինձ անձանօթ էին, որովհետեւ այդպիսի
զգացմունքներ մուտք չեն գործում պալատ-
ները: Յերեկը խաղում էի պարտէզում,
երեկոները պարում էի շքեղ դահլիճներում:
Բարձր պատը բաժանում էր հօրս պալատը
քաղաքից և ես չը գիտէի թէ ի՞նչ է կա-

տարւում պատի այն կողմը: Ես ինձ շատ բախտաւոր էի զգում, և կարծում էի, թէ բոլորն էլ բախտաւոր են, բոլորն էլ ինձ պէս գոհ են իրենց կեանքից: Ինձ անւանում էին «Երջանիկ պրինց» և յիրաւի ես երջանիկ էի...

«Եւ ահա, առանց իմանալու ի՞նչ է վիշտն ու տանջանքը, ես մեռայ: Այժմ, այստեղ, բարձունքից նայում եմ շուրջս և տեսնում եմ մարդկանց չքաւորութիւնն ու տանջանքները: Իմ սիրտը, որ այժմ պողպատից է շինւած, այս իմ պողպատէ սիրտն անգամ չի կարող չարտասւել, տեսնելով այդ տանջանքները: Ահա, նայիր այնտեղ, այն փոքր ու նեղ փողոցին, ուր շինւած է մի աղքատիկ տնայի: Լուսամուտի մօտ նստած է մի կին. նա ոսկեթելով ասեղնագործում է պալատական տիկնոջ զգեստը: Նայիր նրա գունատ և յոգնած դէմքին, նայիր նրա ծակծկոտւած մատներին, նայիր վերջապէս նրա մանկանը, որ հիւանդ պառկած է աղքատիկ անկողնում: Նրա շրթունքները այրւում են տաքութիւնից, նա նարինջ է խնդրում մօրից, իսկ խեղճ մայրը, բացի ջրից, ոչինչ չի կարող տալ տանջւող մանկանը: Սիրելի ծիծեռնակ, խնդրում եմ, բարի եղիր, կըտը-



...Երբ ընկած էր առջևից իր քննարկի...

ցովդ դուրս քաշիր իմ սրի վրայից թանկագին քարը և տար այդ թշուառ ընտանիքին: Ես ինքս կը տանէի, եթէ շարժել կարողանայի:

—Ո՛հ, ես ժամանակ չունեմ,—պատասխանեց ծիծեռնակը.—իմ ընկերները սպասում են ինձ Եգիպտոսում: Նրանք այժմ թռչկոտում են Նեղոս գետի ափերում և վայելում գեղեցիկ ծաղիկների բուրմունքը. այստեղ ցուրտ է, ես չեմ կարող մնալ:

—Ծիծեռնակ, սիրելի ծիծեռնակ, խընդրում եմ, միայն մի գիշեր մնա ինձ մօտ, միայն մի գիշեր: Ո՛հ, եթէ դու զգայիր, թէ ինչպէս է տանջւում այն փոքրիկը և ինքան տխուր է նրա մայրը...

Ծիծեռնակը նայեց «Նըջանիկ պրինցի» երեսին և տեսնելով նրա տխուր հայեացքը, խղճաց ու ասաւ.

—Թէև այստեղ շատ ցուրտ է և ես տղաներին այնքան էլ չեմ սիրում, որովհետև նրանք ինձ վրա քարեր են նետում, բայց մի գիշեր կը մնամ մօտդ և կը կատարեմ քո ցանկութիւնը:

Ծիծեռնակը կտցահարեց թանկագին կարմիր սուտակը և թռաւ դէպի աղբատիկ տունը: Հասնելով նրան, ներս թռաւ բաց օդանցքից և նայեց շուրջը: Մանուկը տա-

ըութեան մէջ տընքում էր, այս այն կողմն էր ընկնում տանջանքից, իսկ մայրը, կարը ձեռին, յոգնածութիւնից ճնշւած՝ նստած տեղը քնել էր: Ծիծեռնակը դրեց թանկագին քարը նրա առաջ, սեղանի վրա, և սկսեց պտոյտ գալ մանկան անկողնու գլխով: Նա իր թևերով հովհարում էր մանկան սյրւող մարմինը:

— Ի՜նչպէս հով է, ի՜նչ լաւ է, — շշնջաց փոքրիկը և քաղցր քնից:

Ծիծեռնակը վերադարձաւ, ամեն ինչ պատմեց «Երջանիկ պրինցին» և ինքն էլ քաղցր քնեց նրա ոտների տակ:



Իծեռնակը միւս օրը ամբողջ ժամանակ սնունդ էր որոնում և երեկոյեան եկաւ պրինցի մօտ:


— Ահա ես ճանապարհ եմ ընկնում դէպի Նգիպ-

տոս, մնաս բարև:

— Ախ, սիրելի ծիծեռնակ, ես ուզում էի քեզ խնդրել, որ մի գիշեր էլ մնաս ինձ մօտ:

— Ո՛չ, ո՛չ, ես չեմ կարող մնալ, իմ ընկերները շուտով կը գնան Նեղոսի կղզի-

ները. այնտեղ հիանալի է, տաք, գեղեցիկ: Այնտեղի կղզիների եղեգնուտների մէջ ապրում են բեհեմոթոնները: Անապատից գալիս են առիւծները ջուր խմելու: Նրանց կանաչ աչքերը վառւում են զմռուխտի պէս, մոնչոցը սարսափ է ազդում շրջակայքին: Բայց մենք նրանցից չենք վախենում:



—Ծիծեռնակ, ծիծեռնակ,— տխուր ձայնով ասաւ պրինցը,—տես, այն տնակում մի երիտասարդ կայ. նա նստել է սեղանի առջև և արագ արագ գրում է: Նրա գեղեցիկ, խոհուն դէմքի վրա ես տեսնում եմ սաստիկ յոգնածութիւն: Ամբողջ օրը նա ոչինչ չի կերել և ոչինչ չունի ուտելու: Գրում է, անդադար գրում, թէև նրա մատները սա-

ուել են ցրտից, Նթէ վաղը չը վերջացնի իր աշխատանքը, կրկին մի օր քաղցած կը մնայ:

— Լաւ, ես մի գիշեր էլ կը մնամ, — ասաւ բարի ծիծեռնակը: — Ի՞նչ, մի սուտակ էլ տանեմ նրան:



— Դժբախտաբար, էլ սուտակ չունեմ, — ասաւ պրինցը: — Թանկագին քարերից մնացել են միայն աչքերս: Դու պէտք է դուրս քաշես աչքիս մէկը և տանես նրան: Նա կը ծախի թանկագին քարը, իր համար կերա-

կուր և փայտ կը գնի ու հանգիստ կը վեր-
ջացնի իր աշխատանքը:

Թէև ծիծեռնակը չէր ուզում պրինցի աչ-
քը հանել, բայց նա այնքան խնդրեց, որ
վերջապէս ստիպեց կատարել իր ցանկու-
թիւնը:

Ծիծեռնակը դուրս բաշեց «Երջա-
նիկ պրինցի» աչքը և թռաւ երիտասարդի
առունը: Ներս մտնելով լուսամուտից, այն-
պէս արագութեամբ դրեց նրա առջև թան-
կագին բարը և դուրս թռաւ, որ երիտա-
սարդը չը նկատեց նրան:

— Ի՞նչ հրաշալի քար է,— բացականչեց ե-
րիտասարդը.— երևի իմ համակրողներից
մէկն է ձգել այստեղ, լաւ ժամանակին հա-
սաւ, այժմ կարող եմ աւելի հանգիստ
գրել յօդածս:

Բախտաւորեցնելով երիտասարդին, ծի-
ծեռնակը վերադարձաւ «Երջանիկ պրինցի»
մօտ և նախկին գիշերւայ նման բաղքը քնեց:





ետևնալ օրը ծի-
ծեռնակը ասաւ.

—Սիրելի պրինց,
ես պէտք է բաժան-

ւեմ քեզանից...

—Ո՛հ, աղաչում եմ քեզ մի օր էլ մնա
ինձ մօտ:

—Ձե՞ որ արդէն ձմեռ է, շուտով ձիւ-
նը կը գայ, ես այստեղ կը սառչեմ ցրտից,
իսկ իմ ընկերները Նգիպտոսում շինել են
արդէն իրենց բները: Ոչ, սիրելի պրինց, ես
պէտք է գնամ, բայց դու մի տխրիր, ես
քեզ չեմ մոռանալ, գարնան սկզբին կը վե-
րադառնամ քեզ մօտ և ինձ հետ կը բերեմ
երկու գեղեցիկ քար, նրանք աւելի գեղեցիկ
կը լինեն, քան քո տւածներդ:

—Սպասիր, սիրելի թըռչնիկ, տես,
այնտեղ պարտէզում կանգնած է մի աղ-
քատ աղջիկ և լաց է լինում: Նա լուցկի
ծախող է. նրա սառած ձեռքերից վայր
ընկաւ արկղը և բոլոր լուցկիները թափ-
ւեցին առուն: Այժմ, եթէ առանց լուց-
կիների և առանց փողի գնայ տուն, հայրը
նրան կը ծեծի. նրա կիսամերկ մարմինը

դողում է ցրտից, բայց նա վախենում է տուն գնալ: Հանիր, խնդրեմ, միւս աչքս և տար նրան տուր:

— Թող քո ասածը լինի, ես մի գիշեր էլ կը մնամ, բայց քո միւս աչքը ես անկարող եմ հանելու. չէ՞ որ դու բոլորովին կը կուրանաս:

— Փոքրիկ ծիծեռնակս, խնդրում եմ, մի մերժիլ խնդիրս, ազատիր փոքրիկ աղջկան ծեծից:

Ծիծեռնակը ցաւելով կառարեց նրա խնդիրը, հանեց երկրորդ աչքն էլ և թռաւ հասաւ աղջկան, ճարպիկութեամբ ձգեց նրա բուռը թանկագին քարը և վերադարձաւ:

— Այ լաւ ուլունք, ինչ գեղեցիկ է, ինչ փայլուն, — բացականչեց փոքրիկը և մոռանալով իր վիշտը ուրախ ուրախ վազեց տուն:


Վերադառնալով պրինցի մօտ՝ ծիծեռնակը ասաւ.

— Այժմ ուզեմ, չուզեմ պէտք է մնամ քեզ մօտ, որովհետեւ դու բոլորովին կոյր ես:

— Ո՛հ, ո՛հ, բարի թռչնիկս, շտապիր, թռիր Եգիպտոս, այստեղ դու կը սառչես:

— Ես միշտ քեզ մօտ կըմնամ, — ասաւ ծիծեռնակը, փարւեց պրինցի ոտքերին և բնեց:

$\frac{A}{3179}$
~~7177~~



Նրա կիսամերկ մար'ինը դողում է ցրտից...





ամանակը անցնում էր, իսկ ծիծեռնակը շարունակ նստած պրինցի ուսին, պատմում էր նրան այն ամենը, ինչ որ տեսել էր օտար երկիրներում:

Պատմում էր վարդագոյն եգիպտական արագիլների մասին, որոնք Նեղոսի միջից ոսկե ձկնիկներ են որսում. ուղտերի կարաւանների մասին, որոնք շարեշար անցնում են անապատով իրենց տէրերի հետ միասին. զարհուրելի օձերի մասին, որոնք փաթաթւում են ամենաբարձր արմաւենիներին և իրենց գոյնով չեն զանազանւում նրա տերևներից:

Պատմում էր նա նոյնպէս, որ Եգիպտոսի թագաւորները կամ փարաւոնները իրենց համար հսկայական բարձրութեան գերեզմանատներ են շինել տրւել, որոնք կոչւում են պիրամիդներ. այդ պիրամիդների մէջ դրւած են փարաւոնների դիակները, որոնք լցւած են զանազան անուշահոտ խոտերով և փաթաթւած մե-

տաքսէ շորերով. նրանց դիակները հազարաւոր տարիներ առանց փշանալու մնացել են այդ պիրամիդների մէջ:

— Բարի, սիրելի թռչնիկս, — ասաւ պրինցը, — քո պատմութիւնները շատ հետաքրքիր են. բայց աւելի հետաքրքիր է ինձ համար լսել մարդկանց տանջանքների ու չքաւորութեան մասին: Թռիւր, սիրելիս, անցիր ամբողջ քաղաքով, նայիր ուշադրութեամբ շորս կոլմդ և ինչ որ տեսնես, եկ պատմիր: Ծիծեռնակը ուրախութեամբ կատարեց նրա խնդիրը և թռաւ:

Նա ոչ մի բան անուշադիր չէր թողնում:

Տեսաւ փառաւոր, շքեղ տներ, որոնց մէջ ուրախ ու անհոգ ապրում էին հարուստները. տեսաւ նրանց սեղանների վրա դարսւած զանազան համեղ կերակուրներ և խմիչքներ, մինչդեռ նրանց դռների առաջ կանգնած էին չքաւորները քաղցած ու մերկ և սպասում էին փշրանքներին:

Ծիծեռնակը թռաւ անցաւ նեղ ու կեղտոտ փողոցներով և հնացած խրճիթների խաւար ապակիների ետևից տեսաւ գունատ ու նիհար դէմքեր, քաղցած ու հիւանդ մանկիկներ: Կամուրջի վրայից թռչելիս նա տեսաւ երկու երեխայի, որոնք միմեանց

սեղմաճ՝ կուչ էին եկել մի փոսի մէջ և
մէկը միւսին ասում էր՝ թէ ի՞նչ լաւ կը
լինէր մի ուտելու բան գտնէինք:

Ծիծեռնակը ետ դարձաւ և բոլորը
պատմեց:

«Երջանիկ պրինցը» մտքի մէջ ընկաւ
և ասաւ:



— Ինձ ծածկել են ոսկէ թիթեղներով:
Ես շատ ուրախ կը լինեմ, եթէ դու պոկես
այդ թիթեղները և բաժանես բոլոր աղ-
քատներին և թշուառներին:

Ծիծեռնակը թիթեղ թիթեղի ետևից պոկ

էր տալիս ու տանում բաժանում դժբախտ-
ներին: Հետեւելով նրանց, նա նկատեց, որ
հետզհետէ նիհար ու գունատ մանուկները
լցւում ու կարմրում են, նրանց տխուր
երեսները փայլում են ուրախութիւնից,
հիւանդները առողջացել են, քաղցածները
կշտացել:

«Մենք այժմ հաց ունենք», «իսկ մենք
կաթ էլ ունենք» — յայտնում էին միմեանց
մանուկները:



դժգետինը ձիւնով
ծածկւեց, սաստիկ
ցուրտը սկսեց: Սառ-

ցէ լուրաները կախւել էին կտուրներից.
երեխաները տաք հագնւած՝ ձնագնդի էին
խաղում: Միայն խեղճ ծիծեռնակը շատ էր
մրսում, բայց չէր ուզում թողնել իր սի-
րելի պրինցին: Նա թևերը արագ արագ
թափահարում էր, որ տաքանայ, բայց ի

դուր. նա զգաց, որ այլևս չի կարող ապրել
և պիտի մեռնի: Վերջին ոյժը հաւաքեց,
թեւերը թափահարեց, թռաւ, «Երջանիկ
պրինցի» ուսին նստեց և շշնջաց:

— Մնաս բարե...


— Գնաս բարե, սիրելիս: Դու ամեն ինչ
արիր ինձ համար, այժմ կարող ես գնալ
Եգիպտոս: Համբուրիր ինձ վերջին անգամ.
ես քեզ շատ սիրեցի:

— Ես Եգիպտոս չեմ գնում, - կամաց
շշնջաց ծիծեռնակը. - ես գնում եմ Մահ-
ւան աշխարհը, բայց դու մի տխրիլ, ես
այլևս չեմ մրսում. ես քնել եմ ուղում,
քունս տանում է:


Ասաւ թռչնիկը և համբուրելով պրին-
ցին մեռած ընկաւ նրա ոտքերի առաջ:


Այդ միջոցին արձանի ներսից մի ձայն
լսեց. «Երջանիկ պրինցի» պողպատէ սիր-
տը վշտից փշրւեց:

Թարգմ. Զարէլ Զիլինկարեան



Դ Օ Ֆ Ի Ն Ի Մ Ա Հ Ը





Դօֆինի մահը



որբիկ Դօֆինը *) հիւանդ է,
Դօֆինը մեռնում է...

Թագաւորութեան բոլոր
եկեղեցիներում գիշեր ու ցե-
րեկ մոմեր են վառւում և աղօթում են Թա-
գաւորազնի առողջութեան համար:

Լուռ են և տխուր հինաւուրց մայրաքաղաքի
փողոցները. լուռ են զանգակները. կառքերը
հանդարտ շարժւում են...

Իսկ պալատի շուրջը խռնւում է հետաքրքիր
ամբոխը և մօտենալով ոսկէ վանդակապառնի՝
նայում է գէր, հսկայ, փայլուն լիվրէններ հա-
գած դոնսպաններին:

*) Դօֆին հին ժամանակ կոչւում էր Ծրանսիայի
Թագաժառանգը:

Դրսում ընդհանուր շփոթութիւն և իրարանցում է տիրում: Սենեկապետները, ախոռապետները և ուրիշ արքունական պաշտօնեաները շտապով ու անդադար բարձրանում և իջնում են մարմարէ սանդուխքներով, նախասենեակներում այս ու այն կողմ են վազում բարձրաստիճան պաշտօնեաները՝ մետաքսով և ոսկով զարդարած զգեստները հագին, որոնք եկել են Դոֆինի առողջութիւնը իմանալու: Նրանք խռնւում են պալատի մեծ դահլիճում: Նրանց գէմքերը տըխրութիւն է արտայայտում:

Յոգնած, արտասւած արքունի օրիորդները մօտենում են իրար, բարևում և ակնածանքով խօսում են փոքրիկ Դոֆինի մասին, ապա գլուխները շարժելով՝ սրբում են արտասուքները իրենց նուրբ թաշկինակներով:

Հարեան սենեակում բժիշկների խորհուրդ է գումարել. ապակէ պատուհանից երևում է, ինչպէս նրանք վիճում են տատանելով երկար թեզանիքները, և իրանց խելօք գլուխները շարժելով՝ արտասանում են ինքնահաւան ճառեր. նրանք բոլորն էլ սև պատմութեաններ են հագել, բարձր գլխարկներ դրել, բոլորն էլ ունեն երկար ոլորած մազեր:

Հէնց այս դռան մօտ կանգնած են Դոֆինի դաստիարակը և ախոռապետը. վերջինս նայում է բժիշկներին և աշխարհիս բոլոր անէծքները թափում նրանց գլխին, իսկ դաստիարակը ինչ որ բան է արտասանում հորասից:

Խոհանոցում էլ իրարանցում է տիրում:

Իսկ հեռում՝ դոմսւմ լսելի է Դօֆինի շառաւ ձիու խղճալի փնչոցն ու խրխնջոցը. իրարանցման մէջ ձին մոռացել է: Զարմացած, վրշտացած և սոված կենդանին կանգնած է դատարկ մսուրների առաջ, սմբակներով խփում է միջնորմին և խրխնջում:

Իսկ ուր է ինքը, նորին արքայական բարձրութիւնը. ուր է ինքը թագաւորը: Նա փակւել է իր առանձնասենեակում, պալատի վերին մասում և մենակութեան մէջ անձնատուր է եղել իր վշտին: Թագաւորները չեն սիրում, որ հպատակները տեսնեն իրանց արտասուքները: Իսկ թագուհին. նա ուրիշ բան է, նա լաց է լինում, հեկեկում է բոլորի ներկայութեամբ, ինչպէս մի երկրագործի, մի ածխագործի կին:

Նա նստած է մեռնող որդու գլխի մօտ, նրա գեղեցիկ երեսը գունատ է և տանջւած, նրա չքնաղ աչքերը լիքն են արտասուքով, նրա շիկնած, ուռած շրթունքները ցնցւում են և նա լաց է լինում անվերջ...

Նիհար ու սպիտակ փոքրիկ Դօֆինը (աւելի սպիտակ քան իր բաթիստէ բարձի երեսը) պառկած է մահճակալի վրա՝ թաղւած ամբողջովին մանեակների մէջ. նրա աչքերը փակ են, շնչառութիւնը թոյլ. կարծում են, թէ նա քնած է, բայց նա քնած չէ. նա հազիւ է շուռ տալիս

իր երեսը դէպի թագուհին և տեսնելով մօր արտասուքները՝ ասում է.

— Ձերդ մեծութիւն, ի՞նչու էք լաց լինում, մի՞թէ դուք կարծում էք, որ ես կը մեռնեմ.

Թագուհին ուզում է պատասխանել, բայց լացը խեղդում է նրան և չի թողնում մի բառ ասելու:

— Լաց մի եղէք, ձերդ մեծութիւն, — շարունակում է երեխան. — դուք մոռանում էք, որ ես Դօֆին եմ, իսկ Դօֆինը չի կարող ալսպէս մեռնել...

Թագուհին լաց է լինում աւելի և աւելի, իսկ փոքրիկ Դօֆինը տեսնելով մօր յուսահատութիւնը՝ սկսում է կորցնել իր արիութիւնը:

— Մայրիկ, մայրիկ, — ասում է նա վախեցած, ես չեմ ուզում մեռնել, ես չեմ ուզում, որ մահը մտնի այստեղ, նա չը պէտք է գայ այստեղ: Հրամայեցէք, ձերդ մեծութիւն, որ այստեղ գան շուտով քառասուն ամենամեծ, ամենաուժեղ զինուորներ, և թող նրանք կանգնեն իմ մահճակալի մօտ, իսկ դրսում թող հարիւր հազար լցրած թնդանօթներ դնեն, և թող նրանք այդպէս միան օր ու գիշեր, որպէսզի մահը չը համարձակւի մօտենալ մեր տանը:

Եւ փոքրիկ Դօֆինը նորից փակոււմ է իր աչքերը. թագուհին չի ուզում երեխայի սիրտը կոտրի, նշան է անում ձեռքով, ու մի քանի րոպէից յետոյ դըսում լսում է թնդանօթների դղըրդոցը:

Նրանք բերւում և շարւում են հիւանդ երեխայի սենեակի պատուհանների տակ. իսկ սենեակն են մտնում բարձրահասակ, ծանր զինւած պահապանները և շարւում հիւանդի մահճակալի շուրջը. նրանք բոլորը հին զինւորներ են, որոնք պատերազմներում են սպիտակեցրել իրենց մազերը:

Դօֆինը երբ տեսնում է նրանց, ուզում է ծափ տալ ուրախութիւնից, բայց ուժը չի ներում:

Բաւականութեան ժպիտը երևում է նրա դունատ շրթունքների վրա, նա ճանաչում է զինւորներից մէկին և կանչում իր մօտ:

— Լօրան, Լօրան:

Ծերունի Լօրանը մօտեցաւ և կոացաւ դէպի հիւանդ երեխան.

— Ի՞նչքան ես ուրախ եմ, Լօրան, որ դու այստեղ ես. ես քեզ շատ եմ սիրում... Տոյց տուր ապա, Լօրան, քո սուրը. ի՞նչ լաւն է, ի՞նչ

մեծն է... Լսիր, Լօրան, եթէ մահը գայ ինձ տանելու, դու նրան կը սպանես, այնպէս չէ՞, Լօրան...

—Այո, ձերդ մեծութիւն, ասում է Լօրան, և արցունքի երկու խոշոր կաթիլներ գլորւում են նրա կնճռոտ, թուխ այտերի վրայից:

Այդ ըոպէին խաչը ձեռքին քահանան մօտենում է Դօֆինի մահճակալին. նա թեքւում է դէպի մեռնողը և երկար ժամանակ ինչ որ բան է ասում նրան, հեղ և ցածր ձայնով: Փոքրիկ Դօֆինը ուշադրութեամբ լսում է նրան, ապա յանկարծ ընդհատում է խօսքը.

—Ես բոլորը հասկանում եմ, տէր հայր, ինչ որ դուք ասում էք, միայն մի՞թէ ես անպատճառ պէտք է մեռնեմ. չի՞ կարելի արդեօք, որ փոքրիկ Թէպպօն, որը ինձ հետ յաճախ խաղում է, մեռնի իմ փոխարէն. գուցէ կարելի է, կամ նա երևի կընդունի, եթէ նրան շատ փող տանք...

Քահանան շարունակում է մեղմութեամբ նրան ինչ որ բան ասել, թեքւելով դէպի ականջը. փոքրիկ Դօֆինը լսում է նրան և աւելի ու աւելի է զարմանում:

Քահանան էլ լռեց:

Արտասուքները փայլեցին խեղճ երեխայի լուրջ աչքերում, և նա խորը հառաչելով ասում է.

— Ես չեմ ուզում մեռնել... Բայց ինձ մըխիթարում է այն բանը, որ եթէ ես մեռնեմ էլ, ինձ համար դարձեալ լաւ կը լինի... որովհետեւ արքայութեան մէջ էլ ես Դոֆին կը լինեմ... իսկ Աստուած ինքը թագաւոր է, նա գիտի իմ բարձր պատիւը, նա կընդունի ինձ ինչպէս մի Դոֆինի:

Ապա դառնում է թագուհուն և ասում.

— Ձերդ մեծութիւն, հրամայեցէք բերել իմ զօրահանդէսի շքեղ հագուստները, իմ բաճկոնը, որի եզերքները զարդարւած է կղաքիսի մորթով, ոսկեզօծ թաւշակերպ կօշիկներս: Ես ուզում եմ հրեշտակներին հանդիպելիս գեղեցիկ հաղնւած լինել, ես ուզում եմ Դոֆինի հագուստով զրախտ մտնել:


Երբորդ անգամ խոնարհւում է քահանան հիւանդի ականջին, խաչը ձեռքին բռնած և երկար, երկար ժամանակ շշնջում է մի ինչ որ բան: Յանկարծ երեխան բարկութեամբ ընդհատում է քահանային.

— Ի՞նչպէս, ես այնտեղ Դոֆին չեմ լինելու, ուրեմն իմ բարձր աստիճանը ոչինչ չար-

Ժի, հապա ինչի՞ համար եմ ես Դոֆին ծնւել...

Նւ չուզենալով այլես լսել ոչ մի բան, երե-
խան շուռ է գալիս և լաց է լինում դառն, խիստ
դառն կերպով:

Թարգմ. Մ. Բէջանեան



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037679

A $\frac{I}{3179}$

Մկ.
օրինակ

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ.